

# ԲԱԶՄԱՎԵՊ ՀԱՆԴԻՍԱՌԱՆ

Բ.Ն.Ս.ՍԻՐԱԿԱՆ -ԳԻՏԱԿԱՆ -Բ.ՐՈՅԱԿԱՆ

ԹՅԱԹ-Հ

ՀԱՅՈՐ

ՀԸ



Ա. ՂԱԶԱՐ

1920

ՑՈՒԼԻՏԱ

ԲԻՒ 7

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՃՈՂԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՅ

ՊՐ. ԱՒ. ԱՅԱՐՈՆԵԱՆ Ի Ս. ՂԱԶԱՐ

Ապրիլ 29 գիշերը Միսիթարեան տարեզրութեան մէջ պատմական օրերէն մին պիտի մայ, Երկու զարէ ի վեր Հայրենիքի վերածնութեան զործին նուիրուած Հայկական Հաստատութիւնը, վերջապէս կը հաւաքէր իւր արդեանց պատողը և իրականացած կը տեսնէր այնքան քաղցը յոյսերն, որով նա ապրեցաւ իւր հայրենիքի սիրով օտար հողի վրայ, օտար երկնքի տակ: Այդ գիշերը, ոչ միայն հինգ տարուան բազմաչարչար պատերազմէն յետոյ, ուրախութենէն կը թնդային վերապրոզներուս սրտերը, այլ և կը թուէր մեզ թէ նաև երկինքը կը զրկափառնուէր մեզի հետ հրճուելու մեր ազատութեամբը: Մեր Հարց, եղբարց և բիւրաւոր նահատակաց հողիքն՝ յափտենական լոյսի մէջ՝ բռցավառ աշքերով, զմբեթարդ խորանէն՝

հանդիսատես կը լինէին իրենց քրտանց և արեան պատկին:

Գիշերի ժամը 11 էր, Միարանութեանս Վարդապետները և Մ - Ռ. Վարժարանի ընթացաւարտ սաները և Պարոն Յ. Պայեան խմբովին կը մտնէին երկաթուղար կայարանը, Գրեթէ զատարկ էր ան, պաշտօնեայներու երեսի վրայ՝ յոզնածութիւնը ստուեր մը ձգած էր, ցանցաւ հետարքիններ, քոնը գլուխնին կը դանդաշէին հոս հօն՝ յօրանջելով, առանց խօսելու և ապուշ նայուածցով՝ մեր այն ժամուն հոն երեսալուն պատճառը հասկանալու համար:

Մեր խումբը միայն շափազանց արթնութեան և ուրախ տրամադրութեան մէջ էր. և շատ զարմանք կը պատճառէր դիտող աշքերուն:

Մէկ կողմէն ալ գոհ էինք. վասն զի

մեր ընական ազատութեան մէջ կը զգայինք զմեզ, և կը համապատասխանէր մեր ներքին զգացումներուն և սրտառոփ սպասումներուն։ Մենք կը գտնուէնք կայարանի մրոտ յարկածածքին տակ, աղօտ լապտերներու լոյսին մէջ, որ գետնազամբաններու գաղափարը կուտար, ստուերներ միայն կը շարժէն հեռուուներն՝ խոր լուռթեան մէջ ընկղմած։ Սալարկին վրայ հաւաքուած մնեց Հայերս, բռնկած մեր Հայրենիցի սիրով, մեր անցեալ զդրախտութիւններով և ներկայիս հասած երջանիկ բախտով՝ կեանքի և կենդանութեան հոգին էինք այն մեռելական մինուրուին մէջ։ կը սպասէնինք կրակու խօսակցութիւններով, կը սպասէնինք ուշադիր, ամեն մի շշուկ, ամեն մի սուլց կը սթափեցնէր մեր զրազած մորքերը, որ կայծակնօրէն կ'ընթանար երկաթուզոյ երկարութեամբ, համբելով կայարանները, ուսկից պիտի անցնէր Հայաստանի Անդրանիկ Խորհրդարանի Նախագահը, որ կու գար մեզ բերելու Հայաստանի ազատութեան հանդիսական առաջին Աւետիսը։

Գնացը ուշացեր էր. մնեց կէս զիշերին կը մօտենայինք, 12<sup>th</sup> հինգ վայրկեան հազիւ մնացեր էր, ծառայդուներու իրարանցումը ծայր տուաւ, զգացինք որ մեր ակնկալած բռակին կը մօտենանց. մութի միջին սուլոցներ կը լուսին, ուրեմն հեռու չէ. Ակնթարթ մը չ'անցած ազդանշանը կը տրուի, գնացըի մանշինը կը լուսի, ահա լոյսեր կը տեսնուին, շշուկն կը բազմանյ, յանկարծ դուրս կը ցոլան մեքենայի երկու հնոցակերպ աշքերն, որ պախուցաթափ միու պէս կը վազէ զիխակորոյս, ձգելով ետքէն ալլսաղինեալ կառախումը մեծաշառաչ զդրոյիններով։ Մենք պատրաստի լարուած ուշացըութեամբ կանգնած ենք. մեքենան փոթորկ կալից և ըրտնաթոր, ոռոնքներէն ծուխ ու շորփի փոնչելով, հետ ի հետ թասելով կ'անցնի մեր առջեն և կը կանգնի, այնպիսի մի տպաւորութիւն գործելով, որ կարծես թէ ինցն իսկ կը զգայ ինքնահաւան հպարտութիւն մը, թէ մի մեծ և թանկագին բան

բարձած ուսերուն՝ կը բերէ, արժանի մեր երկար սպասումներուն։ կը բացուին մի քանի տասնեակ զոններ և մարդիկներու կարճատև հօսանք մը կը թափի դորս, անոնք հրապոյը մը չունինք մեզ համար, և մենք աշք չունինք զանոնց դիտելու. կ'անցնինք յառաջ, հայրէնի բաղդր ննշիւնը կը հասնի ականջնուս, մենք զմեզ կը գտնենք ճակատ առ ճակատ Պարոն նախագահին հետ։ Մեր առաջին հանդիպումն անբացարելի կը մնայ, արինոտ Հայաստանի պատկերը՝ կը կերպարանացուի յանկարծ ուսկիուու զգեստով զարգացած գույքունուցիւները յայտնել բարի գալուստ մաղթելով վսեմ. Նախագահին թէ՛ Միաբանութեանս կողմնն և թէ մեր։ Մենք կարծինք թէ եկողն միայն վսեմաշուրջ նախագահն է. և որցան զարմանը և ուրախութիւն պատճառեց մեզ, երբ նայն ինքն Պարոն նախագահը մեզ ներկայացու կը կողակիցը, շնորհաշուրջ Տիկին նուարը. Անոնք մը որ դիցազանց շրջանին կը պատկանէր, և որ վերակոչեց վայրկենաբար մեր մուգի մէջ Արայն Գեղեցիկ, Անուշաւանն և Արամանեկայ սոսիրն, որոց սուտց և տերեներու շարժումն Հայոց աշխարհի մարդիկ հմայութիւնը ընելու սովորեցան, ուստի ինքնարերար և պատշաճորդն ողջունեցնը յարգելի Տիկնոջ գալուստը, իրըն բարերախտ խորհրդանշան մը և անձնաւորումն Անկախ և Ազատ Հայաստանի. Պարոն նախագահին և իւր Տիկնոջը կ'ընկիրէր յարգելի Պրոֆ. Արմոն Յակոբեան քարտուզարի պաշտօնով, որոյ հետ առաջին անգամ պատիւնեցանը ծանօթանալու անձամբ։ Կայարանէն դուրս, նաւամատոյցին վրայ կանգնած ենք. նոր տեսարան մը բացուերէ պոջէնիս, մութիչն լոյս աշխարհ փոխադրութիւնի պէս Հոս կեանք կար, յառաջ անցնելու հարկն կը ստիպէր մրցիլ և մենք առաջիններէն մէկն եղանց հեծնելու ծովական երիվարներու վրայ։

վենետիկեան պանամական և բանաստեղծական ծական Գոնդոլներու մէջ բազմած, հազիւթիերու ճողփիմնը զգացուց որ կը հեռանայինք ափէն: Խաղաղ և ախորժեկի բնութիւնը, թուշ կու տար մեր անցուղաքի բոլոր բազմութիւնը անխոռվ վայելել, մեզ կը թուէր զարդարուն և լուսավադակնի մէջ ճօնել և պարել. ճեղունն էր պարզ երկնքի աստղաճամուկ կամարն, որմերն ճարտարապետական բանդակագործ հիւսուածքներ, իսկ յատակն աղամանդներով սփռուած գորգեր: Մենց կ'անցնէինց վենետիկոյ մեծ ջրանցքով, աշխարհիս ամենագեղեցիկ պրոցուայով: Պերճաստորդ Գոնդոլն, սաղապանեմ ընթացքով կը սահարկէր հեղանազ ջրերու երեսէն, լապտերներու դիմեական լցուերու միջէն, Ջրանցքի երկու եղերքները կը բռնէին վենետիկեան շքեղակերու և փառահեծ պալատներն, ապարաններն. զիշերային արխութիւնը չէր նսեմացներ բնաւ անոնց վսեմութիւնը և ոչ պէրճութիւնն: Անոնց յափետենական և անմահ կորողներ են Աղդրիականի Դժխոյին անցեալ մեծութեան և փառաց, որոց ճակատներու ստուերներն շարժուելով ջրերու հայելիին մէջ կոհակէ կոհակ, տասն և հինգ դարերու պատկանելի հնութեամբ և լուսթեամբ՝ կ'ողջունէին Հայաստանի ազատ թզին որ յաղթանակաւ կ'անցնէր, յաղթութեանց սովոր ջրանցքներէն. Գոնդոլի ձեւած մկանանց վրայի բացիսիկ ցութերն կը վազէին մեր ճանապարհով, ինչպէս նայազներ որ մեզ ընկերէին և պապուն աչքերով դիտէին մեր շրախմբի անցնելը: Մ'վ զարեր, ովք բախտեր:

Կայարանէն մինչև Ս. Մարկոսի Փոքր Հրապարակի նաւամատոյցն ժամանակն անցաւ զեփիւսի թեկերով. մեր սրտերուն՝ բնութեան ամենայն ինչ ծիծաղուն, զուարթուն կը թուէր: Միայն վերեւ կապոյտ դաշտին վրայ թաւալող լուսնի ափսէն, նա միայն լուռ էր՝ անխօսուն, նորա կիսաստուերն ինկած էր Հառաշանաց կամուրջի վրայ. մեր Գոնդոլներն իրուխանութիւնը մը կտրնցին անցան և մտան

Ս. Մարկոսի ծովածոցի մէջ, այն տեսոյն՝ զալկացաւ Մահիկն և երեսն ծածկեց մութ ամսկերու ետև. մակոյկը կանգ տուա Քանիիլի թագաւորական պանդոկի առջև: Գիշեր բարի մայթելով թանկագին Հիւրեկերուն, դարձանց տուն, մալով բարի լուսոյն:

\* \*

Ապրիլ երեսունի լոյս առաւօտուն, Ս. Ղազարու կզգիին մէջ արտասովոր ոգեռութիւն մը կը տիրէր: Երկու զար՝ յոտին կանգներ էր արժանաւոր ընդունելութիւն մ'ընելու Ազատ Հայաստանի Առաջին Խորհրդարանի Նախագահին: Պարոն Աւետիսի Ահարոննեանը հանրածանօթ դէմք մ'էր բոլոր Հայութեան և առանձին մի սիրելի անձնաւորութիւն Միսիթարեան Միտրանութեան: Շատերու հետ նա անձամբ ծանոթ ենթանոթ և բարեկամ, միւս կէսին՝ « յառաջ քան զմարմառն, զհոգւյն ընկալեալ զծանոթութիւն » համակրելի իրու մատենազիր և բանաստեղծ – վիպասան:

Մտիր և զրշի պաշտամունքն անմահ կը թան երկրի վրայ, երբ մարմինը կը դադրի ապրելէ. զոգ իմ իրը թէ կը փոխուի մահուանէ ի կեանս: Մարգկային հանճարի ստեղծագործութիւնները ժամանակը չի կրնար չնչել: Ուստի իրաւամբ Պարոն Ահարոննեանը կրնայ հռոմէկական հպարտութեամբ ասել. Non omnia tollit. Ոչ մեռանիցիմ ըստ բոլորին: Նորա մտիր ծնունդը քանդակուած է տանմային պատմութեան հշերում և պիտի ապրի Հայութեան կեանքի հետ: Եթէ մարմաւոր ծնունդը սիրելի է ծնողին, տաւելի ևս զազափարական կամ մտաւորական անմահ ծնունդներն, ան թէ ինչո՞ւ Մեծն Անքառաւացւյ Հայաստառութիւնը, Հայաստանի վերածնութեան վառարանը, աւելի ինամուտ փութով կը պատրաստուէր հիւրասիրելու զՊարոն Նախագահը, որովհետև ինըն իսկ վկայեց թէ իւր պատանեկութեան կանաչ հասակին մէջ, Մասիսէն բղիսած շունչի և Այրարատեան դաշտի մաքուր օդի հետ,

Միմիթարեպն Հայրերու զրքերէն ծծել էր հայրենասիրական ողին, վառել էր մտքի ճրագը և սրտի հուրը: Միմիթարեան զրականութեամբ շաղուած և կերտուած մըտքերը, Հայաստանի երկնքին վրայ փայլող աստղերուն պէս, որչափ մին միւսէն առաւելու փառցով և մեծութեամբ, որչափ ալ անոնց հետու գտնուին կեղոնէն, զօրութեամբ Միմիթարեան Համաստեղութեան խմբին կը պատկանին: Պարոն Աւետիս Ահարոննեան հայրենապարփակ գմբեթի փայլուն աստղերէն մին էր և իրեն անցման շրջանը կը կատարէր այդ օրը Միմիթարայ մինուղորտէն:

Ինութիւնը, իրեն երեսյթներով զարմանալի ազգեցութիւն ունի մարդուս հոգւոյն և սրտին վրայ. այսպէս եթէ Պարոն Նախազանի այցելութեան օրը, փոխանակ զուարթ և պայծառ օրուան մը, մուայլ երկինց մը գողանար մեր աչքերէն միջավայրին գեղեցկութիւնները, չգլուխմ թէ պիտի զգայի՞նց այն ուրախութիւնը՝ որով լցուած էինք այդ առաւոտուն: Անոր բախտը որ բացուեր էր յաջողութեամբ Այրարատեան դաշտին վրայ, նոյնը այդ օրը ժպտեցաւ նաև մեզի, երբ կու զար նա աչքի լոյս տալու իւր նժդին հայրենակիցներուն: Երկնքի ժպտը կը ցոլանար երփներանգ ջրերու երեսին, զոր իրբեն ծաղկածին դաշտ մը՝ կորելով կ'անցնէր Պարոն Նախազանի մակոյկը, և կը յառաջէր իր զէպի ի Աւանի բոյրաթիւ Անապատը՝ Ա. Ղազար, որու շինութեանց կարմիր գոյնը, երկնաւալաց նոնիներն և զայլ բուսականութիւնը հետուէն կը գրաւեն ամեն այցելաներուն ուշազրութիւնը: Այն ինչ նաւակն վանքի սահմաններուն մերձեցաւ, հինգ զանգակներն սկսան նիրզաշնակ հնչել և զողանջել, ծածանելով այերի մէջ հայ կուրծքին տակ սխմուած դարաւոր ուրախութիւնը: Վանականներ ամենցի խմբուած էին նաւամատայցին մօս 1: Գոնդոլավար մանուկներն ուժգին ցաշեցին մակոյկի սահմանը և նա կանգ առաւ սահմանուներու առջև: Պարոն Նախազանի թողուց անհամատալաստափայտն և անհամբեր շարժումով մը

նաւակէն ուրբ վանքի հաստատուն հողի վրայ զրաւ: Մինչև բերանի բացութը պչը և երես շատ բան ասին և հասկացան վրար. հոն կանգնած հասակաւոր վարդապեսներէն մին, վաղեմի բարեկամութեան իրաւունքով ողջազուրեց և համրուրուցաւ Պարոն Նախազանին հետ, առ որ ուղից հետևեալը. «Բաղդաւոր կը համարին զմեզ ողջունելու Ազատ Հայաստանի հերոս Նախազանը, Եւրոպիոյ մէջ փոքրիկ Հայաստանի ազատ հողի վրայ 3: Արով հետեւ ծեղմով կը տեսնանց մեր Հայրենիքի փրկութիւնը, որուն երկու զարէ ի վեր ակնկառոյց կը սպասէր Միմիթարեան Հաստատութիւնն»:

Փիխաղարձ սիրավիր ծանօթութիւն տալէն վերջ, Միմիթարատներու հետ խմբովին՝ թանկազին հիւրերը առաջնորդուեցան Եկեղեցին:

Եկեղեցին, մեր ամենցի Մայրը, որուն այնքան կը պարտի մարդ իւր էութեամբ, որքան մարմաւոր ծնողաց՝ ընութեամբ:

Հայաստանիայց Եկեղեցին՝ Ա. Լուսաւորչի, որուց և թոռանց ժամանակէն Հայրենիքի ամէն ուրախալի և ցաւալի երեսոյթներուն մէջ հանդիսացած է իրը պաշտպան և սնուցիչ, զօրավիզն և խրախուածիչ, չարին դիմամարտութեանց դէմ: Երբ թագաւորական իշխանութիւնը ազատ հայրենիքի սանձերն ունէր բոլն մէջ, Հայրապետական մականը կը մեղմէր բռնութեան թափը. իսկ անոր հակառակ՝ նեցուկ և առաջնորդ կը կանգնէր անկարող իշխանութեան: Նոյնը անիշխանութեան դարերուն, իրաւազուրկ և անպաշտպան Ազգին մնաց հաստատուն միւն մը, բարբարուներու յարուցած ալեացը մէջ, Մայր Եկեղեցին եղաւ անոր յոյսը և ապաւէնը, անոր շուրջը խմբուեցաւ ամուր հա-

1. Հարկ 4ը համարինց, տաւ ի սիրտ յայտնել թէ այս օրը մեր բազմաշխատ ծերունի Արքայացը, Խաչատրւու Արքեպիսկոպոս Կիւրեղեան, Ա. Զէնոնի վանապատական ամարանոցումը կը գտնուէր:

2. Վասն զի Կազին Հայ Միանձանց սեփականութեան է.

ւաստվ և հաւերու ձագերու պէս անոր զթոռ թեսերուն տակ փնտռեց իւր զոյոււ թիւնը պահպանելու ապահովութիւնը:

Հինգ դար շարունակ ոչխարի պէս սպանդանոց քշուեցան Հայ ազգի զաւակներն ։ Հայ պարանոցի վրայ թթացաւ անօրինի սուրբը, արիւնը՝ երկիւլ չէր ազդեր Հայ Նահատակի անվեհեր սրտի վրայ, վասն զի ողջակիցի արիւնը որոշուած չէր զին ազատութեան:

Եկեղեցին, Շամունէի պէս քաջասրտութեամբ Կ'ամփոփէր հայրենի հողի մէջ մարտիրոս զաւակաց մարմնները, բայց թափած արիւնը Կ'ոռոգէր և կը զօրացնէր եղբայրներու սրտերը, կը մեծնար օրէ օր ապագայ ազատութեան հաւատեց: Թիիստոսական կրօնին սովորեցուած եղբայրական սէրը, պիտի ընծայէր ազգին դիւցազներ, որ իրենց անձը՝ կեսանցը պիտի դնէին իրենց եղբայրներուն համար, կրօնին և հայրենիցի սիրով, հինգ տարուան անտանելի շարչարաններու միջէն, Հայ ցեղը՝ լրուած ամենիցի, երկնիցին արժանի քաջութեամբ, զողովրդայի ճանապարհով ընթացաւ և բարձրացուց բունրագիդ եռագոյնը Մասիսու զագաթին: ցնծացան կաթողիկէց եկեղեցիներուն, որոց վրայէն շորթեցին Մաճիկի անարգութիւնն և փառոց բարձրացուցին: Ա. Խաչի Նանը, որով փրկուեցաւ մարդկային ազգը, և փրկեց Հայրենիքը շատ մը բանաւորներու ծեռքէն: Մեր ազատութեան և յալթանակի հանդէն վայելու ճոխութեամբ կատարելու համար, հարկ մ'էր մեր երախտազիտութեան շնորհակալութիւնը նախ յայտնել ցեառն զօրութեանց, որ խորտակեց մեր թշնամիներն և բարձրացուց Հայաստան աշխարհն: ուստի Պարոն Նախազահը շըով առաջնորդուեցաւ Եկեղեցին, ուր զաման առջև երկու աղօթարաններ պատրաստուած էին իրենց համար: իսկ զաման մէջ կանգնած էր ժառանական ապահովութիւնը:

նական աղօթքն: յետ որոյ հանդիսադիր վարդապետը, Պահպանիչ թիբատոսի աջովց կնքեց և օրէնք Հայկական Հանրապետութիւնն Հայոց աշխարհին և անոր հանդիսակից Խորհրդարանի Նախազահն, և զինուորեալ մանկունք Հայ բանակին, և աննոց զօրավարները, զօրագլուխները և համօրէն Հայաստանեայց աստուածասէր ժողովուրդը: Սրտերը շարժեցան և յուղուեցան երբ Հանրապետութեան, Պարոն Նախազահին և մի ըստ միոջէ կը յիշուէին միւսների անունները, ուրախութեան ի ինդի արտաստուքներ կը թափէին ամենըի աչցերէն: անկարելի էր այն պահուն անտարերի մալ մտածելով որ երկար դարերու ստրկութենէն վերջ դարձեալ բաղդն ունեցան եազատ Հայրենիքի անունը և անոր արժանաւոր իշխանաւորաց, Պետերու և Վարիչներուն անունները յիշել և անոնց արշաւառութեան համար աղօթել, որպէս զի Աստուած մեզի շնորհէ խաղաղական կեսանցով, ըրբառոնէարար, ևս և իրեւ ազատ հայրենիքի քաղաքացիներ ապրել: Եկեղեցիէն առաջնորդուեցան Միխիթար Ալբայց ծեռակերու մեծ զրատունը, յոյժ սրտազրաւ միջավայր մը: Ոլմերու հետ կանգնած զեղագոււագ դարաններու մէջ, հին և նոր զարերու ստեղծագործ մտքերու գանձերն կը պահուին, զաղափարական և աննիթ կեսանցն նոն Կ'ապրի նորա ամենից լաւ բարեկամներն են, վասն զի անկեղծ են, որովհեաւ անոսկը լեզուն դագեր է խօսելէն: իմաստութեան պրամի մէջ հրաւիրուեցան Պարոն Նախազահը՝ Տիկին նուարդի և Պ. Յակոբեանի հետ բազմելու իրենց համար պատրաստուած բազկաթուներու վրայ: Այն, ատեն Միհարանութեան կողմէն երկու Վարդապետներ բարի գալուստ մաղթեցին Պարոն Նախազահին: Նախ ինքնարուի և անկեղծ զգացմունքներով արտասանեց Հ. Գրս: Այսունեան Վ.

ՆԱԽՈՒՐՈՐՈՇ ՄԵԺԻՇԱՐԱՅ շառաւելիքները տըրուալ,  
ՆԻ հաւատոցով՝ կրդաթ սիրով՝ զալուռ կարօտն  
[ճեք քաշեր,  
Մինչ հուսէ ան գուն երեցար՝ ոսկեխակ իբր ասուպ...  
— իշեն վըրա՛ մեր Հայրենաց՝ բիր օրնու  
[թիւնք շերաշեր:

ԱՀ... սոսկական աննատ մը շիս, — ՌԴՀՇՆ քեզի որ  
[եկոր՝  
Մեր ոըրտերուն յորդ բարախունչն անդասնակծին  
[ըգայու,  
Հայաստանի քաղցրեկ մուսայ, Սուրբ Ղազարու սի-  
րանար...  
Գորովագութ մեր Մայրիկին հըմայքն երգէ՛ տա-  
[դերու:

Ի՞նչ փոյթ մեզի թէ արեծով Միջներկական ծովա անդ՝  
Կ'անչըրպեսէ նողն հայրենի՝ փարախներով բի-  
[բարերի...  
Մեր Հայրենաց շիրիմերէն ունիք մասունք, ո՛ւ,  
[այստեղ,  
Այսմիկ աւ գեղ՝ աւետարեր բարիքներուն երկրատուր:

Ո՞ւ, Հայրենիք պիտի գտննաս օր մ'ըրբուանի՛ եր-  
[դերով,  
Ո՞ւր Եղայրենի և մեր քոյրերն ընդուանի պիտի  
[զան՝  
Պերէ Յաղթանակին հայաստանեայց երբ ըռչակոր ծո-  
[վէ ժով,  
Ու գայրենիք ոսխ պրտուղներն Անդորրանի բնիքա-  
[կան...]

ԱՅՆ ժամանակին՝ ո՛վ բանաստեղծ, Հայ Հայրենաց  
[սիրելին,  
ԱՀԷ ասրերուն պատմէ զըւարթ՝ ինչքան վըշտով  
[ին լացեր՝  
Պանդուխտ որդիքն իբր հարազատ, — իսկ արդ կ'ենան  
[տընծաղին,  
Բարբառելով. «Անման էք դուք Հայրենիք մեսած»  
[մեր...]

Ապա Հ. Աղեքսանդր Վ. Տէօլէն խան-  
դավառ թոփշըով կցից հետևեալ տողերը.

### Փ Ա. Ա. Ֆ Ի Զ Ա. Ի Ա Կ Ն Ե Ր Ո Ւ Ն

Փառքիդ զրասկ  
Հերոս մ'անա, մայր Հայրենիք, որ կու զայ  
Ըստըրկութեան շըթթաներդ  
Ազատութեան երկնքին տակ իտալիոյ  
Ազատութեան արքին մէջ կը լուծէ:  
Արշալուսի ծառափ մէր զի նողին  
Տառապոնի պարեներէն նեւ ի նու  
Այսօր ան կը պարզէ դրոշն յաղթական  
Ամպին վըրայ արթուաթէն.

Եւ յաղթանակին ազատութեան ցընեերգով  
Ուժենորեց կը փողէ:  
Հըրամայակ մեսեներու մեր նոգին  
Կոնքներուն տակ հերոսական վրբէւծով  
Զեր մէջ զըտաւ իբնն երաշ արեսու:

Մընթէների գուա անձ  
Մեր Խորացած Հայրենիքին հեծկըւտակն  
Հայրենիքին արինուայ  
Բայց թէ երբեք պարտաւած  
Դէպ ասորդերը յանած  
Թօթափեցէ, քչէցիր,  
Կապոյսին վրայ երկընքի  
Գրելու խորուուց ցախի  
Ժողովուրդի մը ամբողջ  
Օ՛ն եղայրենը, թօթուեցէք, օ՛ն թօթուեցէք  
Լոյց գերութեան վոշներն  
Զի աւ տեսանք մենք տեսանք  
Չըրարթ փրթթումը յոյսին  
Մեր սրբատան նորի վրայ  
Ուր կը ներէն բիթերնաւ մէջ լուսակեց  
Բըրանդեան ման իբր ասորափի հըրայրագով.  
Տեսանք նորի անկրական  
Եւ յոյս ակոնցք մեր անման երազին  
Հերոսներու արինեն վրայ սրբազան  
Ճականանան վրայ լուսալոց  
Եւ աւ յաւեւ Հայը ձեզոնց պիտ' ապրի  
Զեզոնց վառքի Զաւակներ:

Որոտանդոստ ծափերէ վերջը » յառաջ  
անցաւ Հ. Տիմոթէոս Վ. Տէօլէն կիլկեան՝  
յաւերժական երախտագիտութիւն յայտ-  
նելու հրապարակաւ իրին և Հայ որբերու  
կողմէն, Պարոն Նախազանին, որ կովկասի  
ամենաստագնապալից օրերուն, Տիապիզո-  
նէն փախստական հայութեան թանկազին  
բեկորներուն հայրազուկի խնամքով պատրս-  
պարան և կերակուր հայթայթել էր: Հայ  
ազգի գոյութեան ճգնաժամային օրերում,  
տասաց, Պարոն Նախազանի մատուցած  
ծառայութիւնը Հայրենիքի փրկութեան հա-  
մար ամեն գովեստէ և հիացմունքէ վեր  
է. ինքը նրա մէջ տեսած էր մարմացած  
Ալիստութելի նշանաւոր խօսքը. «Ընկերսի-  
րութիւն շաղկապ միութեան և վերականգ-  
նութիւն Հայրենեաց», սրտազին մաղթանը-  
ներով Պ. Նախազանի արևշատութեան  
այսակս վերջացուց խօսքը. Փատը մտցի  
մշակին, հանճարեղ գործիչին. փառը Հա-  
յաստանի հերոս զաւակներուն: Վերջին  
խօսքերը սրտաթունդ ծափերով ծածկուե-  
ցան:

Ազա խօսց առաւ Փարոն Նախագահը, շնորհակալութիւն յայտնեցը Միաբանութեան իրեն ըրած սիրալիք ընդունելութեան համար և համեստօրէն ասաց, որ այդ իրեն ցոյց տրուած պատիք և փայտանըց կը ընդունէր ոչ եթէ իրեն անձնականապէս եղած, որքան Հայկական Հանրապետութեան, որու Ներկայացուցիչն էր այսօր մեր մէջ, և մեզ կը բերէ Ազատ և անկախ Հայաստանի պատօնական ողջոյնը Ազա ներողեց վայելչապէս Միիթթարի և իւր որդուց կատարած զործի մեծութիւնը Հայրենիքի վերածնութեան գերի մէջ, յոյս տաճելով որ Հայրենիքի ազատութեամբ՝ անոնց զործը զաղաքած չէ, այլ մանաւանդ պէտք է կրկնապատկել ուժերը աւելի թեղուն աշխատութեամբ սատարելու Նոր Հայրենիքի զարգացման և յառաջադիմութեան. և Փարոն Նախագահի մտածուած և հրապուրիչ խօսքերը յուղեցին բուռն ծագիր:

Որչափ հիացուուկ զբաղուած լինէին Միաբանները Փարոն Նախագահի անձնաւորութեամբ, սակայն ոչ ոքի ուշադրութենչն զիփակցաւ համեստափայլ Ծիկին Նուարզի ներքին ալէկոծութիւնն, սրտի յուզումը որ զիփազգած երեսի վրայ կը խալար: Նա վերապահ աշխով զիտում և միաց էր անում անցած զարձածը և երազ կը թուէր տեսածը, որ համապատասխան չէր իւր ունեցած զաղափարներին: Գիտէր նա հաւաստի թէ Միիթթարեան Ալիսն, Հոռմի Եկեղեցոյն զաւանակից է, ուրեմն: Ուրեմն մտածած էր հանդիպել իւր աշխարհի Շնիտորներուն: Սակայն շուտով համոզուեցաւ որ Ալիսնեաց աշխարհի Գեղամայ ծովու Սևան կզզին, Նկարուած էր Վենետիկի լճակին մէջ, ընդ նմին

Եւ զՀայաստան Հըսկայապէս երկանեալ  
Ընդ արևմուտը տեսաներ լուսափայլ:

Եւ կորկուակ անձնապէս սիրու և բրան

ի Գլուխ Հայոց դիեւ Տաճու երկնանան:

Եւ անդ կանգուն արք անմահից զուգապար

ի Պաշլացն մէնք տարին Մըլիթթար:

Քանզի առաջին անգամն էր Ծիկին Նուարդի այցելութիւնը Միիթթարի Տանը,

ուր ամեն ինչ հայկական ոգին և տիպարն կը կրէր. հայրենիքի անարատ շոնչը շածանէի Մ'ենաստանի շուրջը, այդ իրականութեան հանդէպ, եկաւ այն համոզման՝ որ թէպէս ստար ծովերու մէջ սակայն իսկական հայրենական ազատ հողի վրայ կը գտնուէր, և ընդունեց որ Հայոց կղզին Ազատ Հայաստանի մանրանկարն էր իսկութեամբ և հաւատարմութեամբ:

Հասարակութեան մատչելի տեղերը, Գրատուն, Թանգարան և Տպարանը տեսնալէն յետոյ, մասնաւոր առանձնաշնորհութեամբ արտանուեցաւ ազնի Ծիկնոջը՝ Փարոն Նախագահի հետ, այցելել նաև Մ'ենաստանին Միանձանց ընակութեան յատկացուած մասերն ալ: որ թագաւորաց և իշխանազանց միայն Բոյլատրելի է: Բայց որովհետև մեզ համար

Քանց ստար վարդ, բաղր է հայրենաց փուշ:

ուր Թաց որ Ծիկին Նուարդն նոր Հայրենիքի էր վարդ, բայց չ'ունէր նա փուչ:

Երջանը կատարելէն յետոյ, թանկագին հիւրեն հրափիրուեցան Մեղանատուն, ուր հացը կը բեկանենց սիրոյ և միութեան նշանակ: Հոն արդէն պատրաստուած էր համեստ սեղան մը ի պատիւ Փարոն Նախագահին և Ծիկնոջը: Կերակուրներէն աւելի խօսակցութեան նիւթերն շատ էին և համեղ: անյագ կերպով և մեծ ուշադրութեամբ կը լսէինք մանաւանդ Հայրենիքի ազատագրութեան արարցներու մասին պատմած զրոյցները: Ինչ որ ինքն ուղեց լուել, Միաբաններէն ոմն լիշատակից առանձինն Փարոն Նախագահի մատուցած մեծ ծառայութիւնը Հայ ժողովրդի փրկութեան և Հայրենիքի ազատութեան համար, երբ 1917ի վերջերը իրուսական բանակն լրեց կովկասի ճակատը և Հայ ժողովրդը իւրեն անստոյդ ճակատազրով մեաց սալիք և մուրճի մէջ տեղը: Փարոն Աւետիս Ալհարուննեան, ահաւոր վտանգի բերանը հասած՝ փոխանակ ընկնուելու, նա կը ծառանայ սպանալիքի դէմ, ազգին կենաց և մահու ծանր պատասխանատուութեան առջև չվհատիր, չբանիր: այլ ընդ հա-

կառակն ինչպէս յատուկ է մեծ մարդկանց, նա կը համախմբէ բոլոր Հայ ժողովուրդը պատերազմի թատերաբեմի վրայ, որոց սրտերը լի էին վրէժի կրակով, և կը կանգնէր մեղեն պարհապ մը ոփերիմ թշնամոյն դէմ: Հայ զինուորը հրաշքներ կը գործէ քաջութեան և անձնանուորութեան, Նա կարմիր զաշտի վրայ կը ցուցազրէ իւր նախնեաց անզուզական ուազմիկ յայտկութիւնները, մինչև այն ատեն անձանթ աշխարհի, այլ և իրենց իսկ, որ եթէ ոչ գերազա, իրաւամբ հաւասարօր կը գտնուէր բոլոր ուրիշ ազգերու քաջարի զինուորութեան:

Թուրքը Հայ հողի վրայ կը իրուակուի, թշնամոյ քաջակոյտ զիակներու վրայ կը ծածանի յաղթական Հայկական եռազունեան զրօշը: Հայրենիքը փրկուած էր, Պարոն Նախազահը հասարակաց հաւանութեամբ, դափնէպակ կռուի դաշտէն՝ կ'անուանուէր Հայ Հանրապէտութեան Խորհրդարանի Նախազահ:

Ու մեր ալ սրտերը, ու միտք փոխազրուած էին Ալյարատեան դաշտի վրայ, երջանիկ կը զգայինը զմեց այդ րոպէին. ուսակ խորին յարգանքով Միարասուութիւնս ուրախակից կ'ըլլալը Պարոն Նախազահի հետ իւր կատարած մեծ զերին Հայրենիքի հնական բոպէներում, և կ'օրհնէր ի սրտէ և կը մաղթէր որպէս զի դեռ ևս երկար տարիներ իւր հանճարով և օրինակով, այլ ևս փոխանակ վսեմ ըմբուացումների, վսեմազոյն խորհականութեամբ և անդորրութեամբ առաջնորդէր Հայրենիքին դէպ ի սրտը մարդկային գարափարները՝ զարգացման և խաղաղ աշխատանքի, մի միայն իրաւունքի և արդարութեան հիմունքների վերայ կերտելով մեր Ազգի ապազայ մեծութիւնը, բարձրութիւնը և յարաւանութիւնը:

Ինդ նմին սեղանակիցներէն մին խօսեցաւ հետևեալ բաժականարք.

Բարենշան է օրս Միիթարեան Միաբանութեան համար, հիւրընկալելով իւր նուիրական յարկին տակ Հայկական Հանրապէտութեան

Խորհրդարանի առաջին նախագահը, որ Ասսիսու սուրբ սարի կատարէն, ազատութեան շրւտն բունած նարօսագեղ ծիսածան թենքով կ'իջնայ նաղազ կղզեկիս ափին՝ առերենով մնաց Ազատ Հայաստանի ողջոյնը: Ընդունեցէ Պարոն Նախազահ մեր սրտազին նորհակալութիւնները Զեր նախընծառ այցելութեան համար:

Գասան տարի յառաջ եղած էր այս տեղ իրեն գրագէտ և մատուրական սիրելի դէմք մը, մինչդեռ այսօր Ազգային Վերածնութեան անձնաւորութիւն էր և ներկայացուցիչ Հայ Պետութեան. ուստի Զեր ներկայութիւնը կ'ողնորդ զմեց հրճուանորդ և հապատութեամբ կը լեցուին մեր կուրծքերը Հայ ազգին զաւակներ լինենուս, և կը զգանք այս վայրէնիս թէ վերջապէս մեր յոյսերու և վախերու սրտմաշութ վայրէեանները անդառալիքն անցած են և կը գանուիլ Ազատ Հայրենիքի իրականութեան հանդէպա: Կը տեսնեսկ մեր Հայաստան յոտին կանգնած, մեր զարաւոր զահին թշնամին պարտութած խորակուած անոր ոտների տակ: Արազածի և Արարատի բարձունքներու վրայ սուանանձն կը ծածանի նողագուած Հանրապէտութեան եռագոյն զրօշը յաղթական: Անման փառք զայն բարձրացնող դիցազուններուն:

Նոյն եռագուննեանը, բեղմնաւոր խորհրդով կը տեսնաթ պարզուած փարրիկ կղզելոյս վրայ, նաևն է որ մեր սրտերը ներգախակ կը բարախեն մեր սիրելի հայրենակիցներու սրտին ենաւ. նորա հովին տուած գոգն ծալ ի ծալ՝ մեր Զերմին թոշող համբոյուններն են Մասիսու լուսապակ յաղթական նակատին, զարգաբոսոր պատմուաննեալ Ալյարատեան հանաւակներին: Ո՛վ Հայրենիք, ովք անմուաց սրտի տեղիք:

Դուք, Պր. Նախազահ, այդ մի և նոյն հայրենիքի փրկութեան համար կանաչ հասակէդ ծառացաց ըննակալութեան դէմ, կրեցք վիշտս հալածանիւ, բանտի և ասրորդ, բայց ձեր առաքեալի հոգին փոխանակ թուալանու և ընկնուելու, այն հարուածներով աւելի ուժեղ և ամրակուու, խիզախեցիք նոր վտանգներու դէմ, միշտ առաջն գծի վրայ բռնելով Զեզի տեղու Հայ Թաթարական (1905-6) կոհիներու մէջ հանդէս եւալ Զեր և Ծնկերների կազմակերպող տապանդը, որու վրայ զարմացաւ ամբողջ Ռուսիա, նա' որ լոյսով պիտի փայլէր 1918 Հայաստանի խաւար հորիզոնի վրայ: Ամեն հայ սարսափով կը յիշէ այն արաւիրքի օրերը: Հայ հանճարը վարանու ժողովրդին մատնացոյց կ'ընէ փառքի ուղին, ման և յաղթութիւն ացք առած, իրեզ-

Խորէն անցաք Ռուպիկոնը Հայ բանակին հետ. «Քառասուն դարեր Արարատի բարձունքէն ձեզի կը նայէին». Թշնամին Սարտարապատի գաշտի մէջ գիտապատ ինկաւ անկանգնելի: Բերկրեցաւ Հայաստան այդ յաղթութեամբ և փարատեցաւ Զեր սրտէն պատասխանատութեան երկրուզ: Ազատ է Հայրենիք, Գուք Տիրտսովի փառքի կէսը կապտեցիք. կը չորհաւորենի Զեր Պարոն Նա-

Հայկական Հանրապետութիւնը. Կեցցէ անպարտ տելի Հայ բանակը. Կեցցէ Հայ ժողովուրդը:

Առ որ Պարոն Նախազա՞նը վրայ բերաւ, իւր վառվուն ոճով, համեստօրէն լուսթեամբ անցնելով գէպ ի իրեն արտայացտուած հիացման ցոյցերն, ծանրացաւ



Խմբածկար վամքի քառամկեամ պարտիզի մէջ.

իազան, հանգիստ սրտով վայելել Զեր քարտինքով շահած զափնիները և Հայ ժողովուրդի մէրը:

Հնեաւոր ծպէրուս ափերէն Զեր միջոցաւ մեր խանդավան ողջոյնները և երախտապարս զգացումները կը նուիրենիք մեր քաջարի Հայ բանակին, հայրէնիքի անձնանուէր որդիքներուն, սրոնք դիցազանց վայել արարդով և սրտով նետուեցան յասպարէզ մարտին.

«Հարունց հարսանց, եղաւց որւաց հանուց Հայոց  
[կրէխներե»]

Կեցցէն Հայաստանի ազատարարները:

Այս զգացումներով կը բարձրացնենիք մեր բաժակները, Պարոն Նախազան, Կեցցէն, Կեց-

Միարանութեանս անցեալի և ապազայի գործունէութեան վրայ, յուսադրելով շվախենալ յեղափոխական գործէն, այդ ողին երկու գար Միմիթարի որդիքը իրենց երկամիրութիւններով յառաջ բերին ազգի մէջ՝ բնաշրջումի օրէնքով. այս կողիին մէջ մշակուած խաղաղ աշխատութիւնը պատրաստեց Հայրենիքի վերածնունդը. Միմիթարայ Միարանութեան գործը լմացած չէ Հայրենիքի ազատութեամբը. նորա աշխատեցան այն ժամանակ երբ հայրենիքը կապանցներու մէջ էը. հիմայ ուրեմն պէտք է աւելի հրապուրիչ լինի Ազատ Հայա-

տանը, որ զեռ կարօտ է լոյսի, զարգացման շնորհակալութեան աջ ի յաջ խառնեցին և յառաջաղիմութեան։ Հայ ազգը իրաւ սրտազին սեղմումով։ ւոնց ունի յուսալու Միմիթարեան Հայ։ Սեղանէն յետոյ վանքի պարտիզի մէջ, բերէն լայն չափերով աջակցութիւն նոր կամարակապ սրահներու մէջ ժամկի մը



Պր. Աւետիս Անարութեաթ և Տիկիմ Նուարդ, Գրոֆ. Ս. Յակոբիան  
վաճրի կամարակապ սրահի մէջ.

Հայրենիքի վերաշինութեան գործի մէջ Նուարդի աւագանական հիմնարկութիւններով։

Պարոն Նախագահի այս ինցնասիրութիւն շոյող հրապուրիչ խօսքերը, իրեւ քաջաւ լեռութիւն մը ընդունելով ունկնդիրները,

չափ մտերմական խօսակցութեամբ անց նելէ յետոյ, Պարոն Նախագահը մեկնելէն առաջ փափարեցաւ ՆԱՀԱՊԵՏԻ շիրմին ալ տալ այցելութիւն, որ երգեց Հայոց գեղեցիկ գարունը աղեկէզ սրտով։

Այս հառաջանքու ըլլան մեր մայն, մեր այս փափաց. Որ Հանգարտիկ ենէ հոգեակս երթայ խաղաղ, Գերբազմնիս ծագէ պահն Հայոց ծիծաղ... Ո՛չ, եղող մեռն ծեր Կահապետ, մռնու տապան. Այլ Թող ենէ՝ ի տապանէն Նոր Հայստան:

Նա յուշի ունէր գնալ ասելու թէ՝ Հայոց աշխարհի զեղեցիկ գարունն եկել է. ու Նոր Հայստանն տապանէն յարութիւն առել: Գերեզմաննոցի մուտքին՝ երթեմն Հ. Ալիշանի գրած դամբանական վերտառութիւնը՝ ուղեց վերստին ձայնով կարդալ.

Ի հայրենեաց նժողութ յօժարք յանիով կողին Ի սպաս Փրկչին, Մօրն կուսի և Հայ Ազգին. Ուր միաբան վաստակեցին հանցին և անդ Հայր և Եղբարը Միկթարեանը յոյս անվկանդ. Յարփիանալ մահաւածած կնացն առուր. Նորադիտակը զուզապերէ լուսափետուր:

Նա որ գրեց, Միկթարայ և Ազգիս անվրկանդ յոյսերու մեծն, կը հանգչէր անդ յարիտենական լուսութեամբ:

Հոն մենց բոլորս պատկանեանով Մեծ Նահապետի զերեզմանի վրայ խոնարհած մեր ճակատները ասացինք. Հոգւոց... Ու մոցով սլանալով Արևելք դէպ ի Ազատն Մասիս և Հայրենիք, մրմնջեցինք անոր ուիստը.

Աւ և Նահապետ շամքան ծերունիս՝ Երթամ մեր հին հարցըն տամ աւետիս, Ասեմ, թէ գորուն երեկ տան Հայոց, Գոր Կահապետիս ասացէք՝ Հոգուց. Մէր Նահապետի՝ տուր կոկուող հոգիկ Որ զեզ պինդ սիրեց, Հայոց աշխարհէկ:

Մահու խստութիւնն ալ ունի իւր վսեմ և հմայիչ ներգրծութիւնը: Հուզոյ Փոսկուրս կը գրէր առ իւր սիրելի բարեկամն.

Երերմ բախազանց՝ զարի ողին, ո՞վ Պինքմռնան, Ալ մեծամեծը վասն, և զեղացիկ և պրանչէր Ընծայն պանդընտին զասպնշականն իւրեանց զերկիր:

Ա. Ղազարու ասպնջական կղզեկին մէջ կը հանգչի Հայրենիքի մեծ զաւակը Հ. Ալիշան: Նա որ սիրեց զԱստուած և

ապրեցաւ Հայրենիքի համար՝ չհասաս մեր պատմական օրերուն, չունեցաւ միիթարութիւնն ըստ Հայրենիքի պատութիւնը: Մեր հին Հարց հետ, իրեն ալ անոր աւետիւը բերաւ Հայկական Հանրապետութեան Խորհուրդին՝ Նախագահը: Վերածնութեան սոսափիւնը անցաւ ամենցի սրտերէն, ան Ծեր Նահապետի բարեկն էր:

Դարձանը նաւամատոյցի վրայ, ուր Միաբանութեան կողմէն, Խորին շնորհակալութիւններ և արեշատութեան մաղթանցներ կրկնուեցան Պարոն Նախագահին, Տիկին Նորարդին և Պրոֆ. Սիմոն Յակոբեանին իրենց անակնկալ և թանկագին այցելութեան համար: Անմոռաց յիշաստակի օր մը՝ ճերմակ պիտակի վրայ գրուելու արժանի Սիրալիք ողջերթի ուղերձներու և ծափերու ցնծազին ծայներու մէջ՝ շարժեցաւ Պարոն Նախագահի մակոյկը, թողով մեզի օրուան գեղեցիկ Յուշը և Հայրենիքի կարոտը:

ՄԵԼՈՒ ՇԻՐԱԿԱՑ

## Մ Ի Ռ Ի Ծ Ա. Ղ. Ի Բ

○ ○

Ո՛չ, ամբարեշտ, մի՛ ծիծաղիր

Ցաղթանակի պարծանքով,

Եթէ՛ երբէք (սըսապատիր

Խարդախութեանց բիւր շանգով)

Նենգ վախճանին մոլար մըսպիդ՝

Ո՛չ, զազրաբար զաս հասնիս...

—\*

Մէն մարդու պէս մանրակրկիտ

Օր մ'հաշիւ տալ կը պարտիս...

Ո՛չ, ամբարեշտ, մի՛ հեզնաբար ծիծաղիր,

— Այսօր՝ թէ ինձ, վազն ալ քեզի,

Բոյն մ'է ցաւոց՝ գեղեցկութիւնն ի ծարիր,

Աղա մը՝ սըսպոյրն երեսի:

Հոգիւթակիդ Նուազմեր» Հ. Գ. Աթենեան